ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2014թ. հունվարի 28-ի թիվ 3/8

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի զ) կետով, ինչպես նաև ՀՀ վերահսկիչ պալատի 2014 թվականի գործունեության տարեկան ծրագրի 3-րդ կետի դրույթներով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Իրականացնել վերահսկողություն՝ ՀՀ պետական բյուջեից ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը հատկացված միջոցների օգտագործման և բյուջետային մուտքերի ապահովման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ.
2. Սահմանել որպես վերահսկվող օբյեկտներ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը, ներառյալ՝ աշխատակազմը, նախարարության համակարգի կազմակերպությունները:
3. Սահմանել որպես վերահսկողության տեսակներ՝ ֆինանսական, համապատասխանության և արդյունավետության (կատարողական): Վերահսկվող

օբյեկտում իրականացվող վերահսկողության տեսակն ընտրում է համակարգող խորհրդի անդամը՝ այն համաձայնեցնելով ՀՀ վերահսկիչ պալատի նախագահի հետ:

4. Սահմանել որպես վերահսկողության ձև՝ դիտարկում, ստուգում և վերլուծություն:
5. Վերահսկողության կատարման ժամկետ սահմանել 2014 թվականի փետրվարի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը:
6. Վերահսկողությամբ ընդգրկվող ժամանակաշրջան սահմանել՝ 2013 թվականի հունվարի 1-ից մինչև վերահսկողության ավարտը:
7. Հաստատել վերահսկողություն իրականացնող հանձնաժողովը՝ պաշտոնատար անձանց հետևյալ կազմով.

հանձնաժողովի նախագահ	
վարչության պետ	Դավիթ Չիբուխչյան
անդամներ	
վարչության պետի տեղակալ	Կարեն Ավագյան
գլխավոր մասնագետ	Արմեն Մինասյան
գլխավոր մասնագետ	Ազատ Մխիթարյան
գլխավոր մասնագետ	Օֆելյա Հակոբյան
գլխավոր մասնագետ	Խաչիկ Մարտիրոսյան
առաջատար մասնագետ	Հարությունն Մուրադյան
առաջատար մասնագետ	Ռաֆայել Հակոբյան
մասնագետ	Արամ Ստեփանյան
մասնագետ	Նարեկ Հովակիմյան
մասնագետ	Խանիկ Պետրոսյան

8. ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի անդամ Լիլիթ Գևորգյանին՝ համակարգել սույն որոշման կատարումը:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ի. ՉԱՔԱՐՅԱՆ